Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Գ. Ս. ԵՈՒԴԻՆՅԱՆ

XIX դ. վերջին քառորդին հայ հասարակական-քաղաքական մտքի կիզակետում գտնվող հիմնական պրոբլեմն ազգապահպանման հարցն էր, որը հանդես էր գալիս իբրև ազգային միասնական օջախ ստեղծելու միջոցով հայության տարբեր հատվածներն օտարացումից ու ձուլումից փրկելու խնդիր։ Այն լուծելու համար պայքարի ելած մեր ազգային կուսակցությունները ոչ թե բուրժուազիայի կամ մանր բուրժուազիայի դասակարգային շահերի պաշտպաններն էին, այլ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը ղեկավարող կազմակերպությունները։ Մի կողմից դասակարգային հակասությունների մեղմ բնույթը, մյուս կողմից ազգային մեկ օջախում համախմբվելու առողջ ու բնական ձգտումը հանգեցրել էին նրան, որ հայ հասարակական մտքի մեջ ազգային-քաղաքական խնդիրները հանդես էին գալիս որպես հիմնական պրոբլեմներ, որոնցից էր կախված սոցիալական հարցերի լուծման ընթացքը։ Այդ պատճառով անցյալ դարավերջի հայ իրականության յուրահատուկ պայմաններին չի համապատասխանում խորհրդային պատմագիտության մեջ «քաղաքական կուսակցություն» հասկացությանը տրվող բնութագիրը, որի համաձայն կուսակցությունը հանդիսանում է «դասակարգի ամենակազմակերպված մասը, որը արտահայտում և պաշտպանում է իր դասակարգի (կամ այդ դասակարգի ներսում եղած առանձին խավերի) շահերը և ղեկավարում է նրա պայքարը»[1]։ Մեր իրականությանն ավելի մոտ է նույն հասկացության նախախորհրդային ըմբռնումը, ըստ որի քաղաքական կուսակցությունները մարդկանց այն շատ թե քիչ նշանակալի խմբերն են, որոնք «...ունեն ընդհանուր քաղաքական իդեալներ, ձգտում են միևնույն քաղաքական ռեֆորմներին և կազմակերպված են այդ իդեալները պաշտպանելու կամ էլ նրանց իրականացման համար պայքարելու նպատակով»[2]։

Ազգային ընդհանուր իդեալների շուրջ համախմբված բազմահազար գործիչների, մտավորականների ու հայդուկների մի կուսակցություն էր Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, որի կազմավորմանը նախորդեց գաղափարական տարբեր ուղղություններ ներկայացնող գործիչների համախմբման գործընթացը։ Այդ գործընթացում կոփվեց ու իր հստակ տեսքը ստացավ հայ մարտական կազմակերպությունը։

Դեռևս XIX դ. 50—60-ական թվականներին ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը տիրաբար իր ազդեցությունն էր տարածել հայ հասարակական մտքի վրա և ազգապահպանման ավանդական սխեմաների փոխարեն, որոնք ազգի հենարանը որոնում էին կամ Հայաստանյաց առաքելական եկեղեցու գրկում, կամ էլ լուսավորության ու եվրոպական քաղաքակրթության մեջ, առաջ էր քաշել իր հավատամքը, իր սրբության սրբոցը՝ հայրենիքի գաղափարը։ Հայրենիքի պաշտամունքի կերտողներն առաջին հերթին Ղ. Ալիշանն ու Մ. Խրիմյանն էին, իսկ Մ. Նալբանդյանն ու նրա արևմտահայ համախոհները փորձեցին որոնել նույն գաղափարի իրականացման գործնական ուղիները և առաջինն ըմբռնեցին, որ «մեր հայրենիքի» ազատագրումը պիտի իրականացվի «յուր քաջ որդոց սուրբ

---

[1] Советская историческая энциклопедия, т. 10, М., 1967, с. 896—897.

[2] Энциклопедический словарь, т. 22, издатели Ф. А. Брокгауз и И. А. Эфрон, СПб., 1897, с. 387.

արյունով»։ Պատկերացումների այս ընդհանուր համակարգը, որը ձևոք էր բերվել 1850—1860-ական թվականներին, կոնկրետացավ և սկսեց ծրագրային բնույթ ստանալ 1870-ական թվականների սկզբին, Մ. Խրիմյանի պատրիարքության շրջանում Թուրքական կառավարության առջև բարձրացված գավառական հարստահարությունների խնդիրը հայ հասարակությանն առաջին անգամ հստակ պատկերացում տվեց Արևմտյան Հայաստանի հայ բնակչության վիճակի մասին։ Հայաստանի իրական կացության համացությունն այն փոխելու համար սկսվող պայքարի առաջին քայլերից էր։ Պատրիարքարանը և Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովը Թուրքական կառավարության առջև բարձրացրին գավառներում բնակվող հայության հարցը՝ հայկական հարցը, որը դարձավ հայ-Թուրք հարաբերությունների առանցքային խնդիրը։ Այդ խնդիրն արդեն գոյություն ուներ, երբ սկսվեց 1877—1878 ԹԹ. ռուս-Թուրքական պատերազմը, որը ստիպեց վերանայել հայ քաղաքական մտքի մեջ հաստատված պատկերացումներից շատերը։ Երբ պարզ դարձավ պատերազմում Ռուսաստանի հաղթանակը, 1877 Թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Կ. Պոլսում տեղի ունեցած գաղտնի հավաքներում որոշվեց բարձրացնել հայոց հարցը և հասնել Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը։ Այս որոշումների ոգեշնչողը Մ. Խրիմյանն էր։ Մի քանի ամիս անց դրանք դիվանագիտական բանակցությունների սեղանին դրեց պատրիարք Ներսես Վարժապետյանը։ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, նրան հաջորդած ռուս-անգլիական հակամարտությունների սրման նոր փուլը և, վերջապես, Բեռլինի կոնգրեսն ալեկոծեցին հայ քաղաքական մտքը ու երբ փոթորիկը դադարեց, պարզորոշ կերպով սկսեցին գծագրվել հայության հիմնական նպատակը և նրա իրականացման ուղիները։ Մկրտիչ Խրիմյանի «երկաթե շերեփի» մասին նշանավոր քարոզը և Ազգային ժողովում Ներսես Վարժապետյանի 1878 Թ. հուլիսի 21-ի հաշվետվությունը[3] հայ քաղաքական մտքը հարստացնում էին ինքնօգնության գաղափարով, ուժական ուժերով ու միջոցներով հայրենիքը փրկելու ծրագրով։ Եվ եթե Մ. Խրիմյանը «երկաթե շերեփն» էր մատնանշում որպես այդ ծրագրի իրականացման հիմնական միջոց, ապա Ն. Վարժապետյանն ուշադրություն էր դարձնում խաղաղ տնտեսական զարգացման համար ստեղծվող հնարավորությունների վրա։ Այսպիսով, հայ քաղաքական մտքը հանգեց այն եզրակացության, որ սահմանի Թուրքական կողմում է գտնվում հայոց պատմական հայրենիքի մեծագույն մասը, որի ազատագրումը ողջ հայ ժողովրդի փրկության ու գոյատևման պայմանն է։ Այս գաղափարը որպես անվերապահ ճշմարտություն ընդունեցին հասարակական մտքի բոլոր ուղղությունների ներկայացուցիչները՝ տարբեր մոտեցում ցուցաբերելով այն իրականացնելու ձևերի ու մեթոդների հարցում։

1870—1880-ական թվականներին ամբողջական տեսք ստացավ հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը, որի ձևավորման հիմքում ընկած էր Թուրքական բռնապետության և հայ ժողովրդի միջև ազգային ու սոցիալական հակամարտությունների հիման վրա առաջացած կոնֆլիկտը։ Այդ կոնֆլիկտում առաջին պլանի վրա կանգնած էին համազգային խնդիրները, որոնց գիտանկյունից էին արժեքավորվում սոցիալ-դասակարգային հարցերը։ Հայ ազատամարտի գաղափարախոսությունը մի շարք պրոբլեմների ընդհանուր համակարգ էր։ Դրանք էին. ժողովրդի ազատագրման ուղիների հարցը (զինված պայքար կամ խաղաղ առաջադիմություն), հայ ազատամարտի պատմական օրինաչափության պրոբլեմը, ազատագրական շարժման սոցիալական բովանդակության շուրջ կատարվող տեսական պրպտումները, ճնշված ժողովուրդների միջև դաշինքի հաստատ-

---

3 Պատասխան Մ. Պատրիարք Հոր վասն հարցման երկուսման երեսփոխանաց, «Ամենագրություն Ազգային ժողովոյ», Դ., բացում 1878 ամին, նիստ Ե, 21 հուլիս, 1878, Կ. Պոլիս, 1870—1880։

ման ուղղությամբ մշակվող պլանները։ Գաղափարախոսության առանցքային հարցը ժողովրդի ազատագրման ուղիների ու մեթոդների շուրջ ծավալված սուր բանակռիվն է, որի մի թևում կանգնած էին զինված պայքարի, մյուսում՝ խաղաղ տնտեսամշակութային առաջադիմության կողմնակիցները, իսկ նրանց միջև տատանվում էր պայքարի միջանկյալ ուղիների զանազան նրբերանգներն ընտրող տեսաբանների տարամիտված մի բազմություն։ Որպես զինված պայքարի անհրաժեշտության պաշտպաններ մեծ մասամբ հանդես էին գալիս դեմոկրատ մտածողները։ Ռուսական կողմնորոշման դրոշը պարզած արևելահայ լիբերալները և ազգային պահպանողական առանձին գործիչներ նույնպես սուլթանական բռնապետության դեմ զինված պայքարի կողմնակիցներ էին։ Որդեգրելով զինված պայքարի գաղափարը, ազատագրական շարժման տեսաբանների մի մասն այն դիտում էր իբրև ինքնապաշտպանության միջոց, իսկ մյուսները՝ ազգային ազատագրության միակ ուղի։

Հայ ժողովրդի համեմատական ցրվածությունը, Արևմտյան Հայաստանում մահմեդական բնակչության առկայությունը դժվարություններ էին հարուցում համաժողովրդական ապստամբության ճանապարհին։ Դրան զուգահեռ, երկրի բնական պայմանները լայն հնարավորություններ էին ստեղծում հայդուկային պայքարի համար։ Այդ պատճառով աճող դժգոհությունը, բուլղարական նախադեպը ճակատագրական անխուսափելիությամբ հասցնում էին զինված պայքարի մտայնության ամրապնդմանը և կանխորոշում այդ պայքարի կոնկրետ ձևը՝ հայդուկային-ֆիդայական կռիվները։ Հայդուկային շարժումը, որի անհրաժեշտությունը հիմնավորվում էր Բաֆֆու վեպերում, Պետերբուրգի և Մոսկվայի հայ ուսանողների հրատարակություններում և այլուր, ծնվել էր ո՛չ այս կամ այն հեղինակի ստեղծագործական երևակայությունից, ոչ էլ միայն բալկանյան փորձի պատճենումից։ Դա Արևմտյան Հայաստանի դժնդակ պայմաններում դժգոհության արտահայտման ձևերից ամենահարմարն էր և այդ պատճառով էլ փրկության հույսեր էր ներշնչում երիտասարդությանը։ Զինված պայքարի հակաթեզը խաղաղ տնտեսամշակութային առաջադիմության գաղափարն էր։ Զինված պայքարը մերժողների մի մասը լուսավորության տարածումը և երկրի տնտեսական զարգացումը համարում էր տվյալ ժամանակաշրջանի համար միակ հնարավոր քաղաքականությունը և հույսերը կապում էր մեծ տերությունների դիվանագիտական միջամտության հետ (Ն. Վարժապետյան, Մ. Չերազ և այլն)։ Ի տարբերություն ազատամիտների, 1860-ականների լուսավորական ավանդույթներին հավատարիմ դեմոկրատ մտածողները (Բաֆֆի, Մ. Խրիմյան) լուսավորության տարածումը և տնտեսական առաջընթացը դիտում էին որպես զինված պայքարի նախադրյալների ստեղծման կարևոր պայման։ Լուսավորությունն ազգային-ազատագրական շարժման պրոցեսում նրանց համար միջոց էր և ոչ թե նպատակ։

Հանդիսանալով շարժման առջև կանգնած խնդիրների արտացոլումը, հայ ազատամարտի գաղափարախոսությունն այդ խնդիրները հասարակությանն էր մատուցում այս կամ այն տեսաբանի սոցիալ-քաղաքական դիրքորոշման կիզակետի միջով։ Համազգային խնդիրները սոցիալական որոշակի խավի շահերն արտահայտող գործիչը յուրովի էր ըմբռնում։

Այսպիսով, գաղափարախոսությունը տարանջատվում էր ոչ միայն ըստ հիմնահարցերի, այլև ըստ հասարակական մտքի ուղղությունների։ Այդ ուղղությունների մեջ հայ ժողովրդի ազգային ազատագրության ու ազգային պետականության վերականգնման խնդիրներն առավել հետևողականորեն և ամբողջական ձևով պաշտպանում էին 1870—1880-ականների հայ ազգային դեմոկրատները, որոնց խոշորագույն ներկայացուցիչը Բաֆֆին էր։ Շարունակելով Մ. Նալբանդյանի ավանդույթները և կոնկրետ բովանդակություն ու նպատակ հաղորդելով հայրենիքի ազատագրման նրա ծրագրին, Բաֆֆին ամփոփեց հայ ազատագրական շարժման փորձը և կանխորոշեց նրա զարգացման հեռանկարները։ Բաֆֆու ազգային-դեմոկրատական մտահայեցու-

թյունը, որը ծնվել էր «հայոց էթնիկական ոգու հազարամյա ինքնաստեղծումից, պատմության ինքնագիտակցումից»[4], հենվում էր երկու մեծ ու հավերժական գաղափարների վրա։ Դրանցից առաջինն ազգն էր՝ պատմության բոլոր հողմերին հակառակ իր հիշողությունը և ամբողջության հստակ գիտակցումը պահպանած հավաքական կամք ու նպատակներ ունեցող հայությունը, երկրորդը՝ հայրենիքն էր, Հայաստան աշխարհը, որի պաշտամունքը նա սերմանում էր ազգի զավակների սրտերում և միաժամանակ պատմության ու ժամանակի մեջ կերտում էր այդ երկու հասկացությունների միասնության ու անբաժանելիության գաղափարը։ Անհնար է մտածել, իհարկե, որ Բաֆֆին չէր գիտակցում ազգն ու հայրենիքը մեկ միասնության հասցնելու ճանապարհին կանգնած դժվարությունները և գրեթե անանցանելի խոչընդոտները։ Բայց այլ ելք ցույց տալ նա չէր կարող, քանի որ մյուս բոլոր ուղիները տանում էին դեպի ինքնահրաժարում և ինքնամոռացություն։ Հայությունը պետք է իր ինքնությունը հաստատեր ինքնազոհության ճանապարհով։ Այդպիսին էր նրա պատմության անողոք տրամաբանությունը։ Մոտ մեկ հազարամյակ առաջ կորցնելով իր պետականությունը և սփռվելով աշխարհով մեկ, հայ ժողովուրդը կանգնած էր կա՛մ նորից այն վերստանալու, կա՛մ ընդմիշտ պատմության գիրկն անցնելու երկընտրանքի առաջ։ Դրա համար էլ նա պետք է ոտքի ելներ «...նահատակության արյունով լվանալու և սրբելու ստրկության արտասուքը...»[5]։ Թուրքիայում, Իրանում, Անդրկովկասում և ողջ աշխարհում ցրված հայությունը պետք է հավաքվեր իր պատմական հողերի թեկուզ մի մասի վրա, պիտի կառուցեր իր տունը, որը միակ պատնեշը կարող էր դառնալ օտարացման ու ձուլման անողոք հողմերի առաջ։ Նրան սպասում էին ծանր փորձություններ ու կորուստներ, որոնցից խուսափելն անհնարին էր։ Իսկ այդ բոլորը կարելի էր հաղթահարել միայն սեփական ուժերի ու հնարավորությունների ճիշտ հաշվառման ճանապարհով։

Ազգային միասնության և սեփական ուժերով պայքար մղելու անհրաժեշտության մասին բաֆֆիական գաղափարները դարձան այն անաղարտ ակունքը, որին միացան աջից՝ հայ ազատամիտների, ձախից՝ ազգային նարոդնիկության գաղափարական վտակները, միախառնվեցին միմյանց և դրանց սինթեզի հիման վրա ձևավորվեց Հ. Հ. Դաշնակցության գաղափարախոսությունը։

Այսպիսով, Հ. Հ. Դաշնակցության գաղափարական ակունքները բազմազան են և բազմաթիվ, բայց որտեղից էլ նրանք սկիզբ առնեին, վերջ ի վերջո միանում էին ու բյուրեղանում ազգային դեմոկրատական գաղափարների մեջ՝ ընդգծելով ազգային արժեքների առաջնությունը սոցիալական անցողիկ տեսությունների նկատմամբ։ Դա ճնշված ու պետականազուրկ, ֆիզիկական բնաջնջման ու ձուլման վտանգի առջև կանգնած ժողովրդի քաղաքական մտածողության բարձրագույն դրսևորումն էր, գաղափարական այն վիրակապը, որով կարելի էր միացնել բաժանված ազգի բեկորները։

Ազգային միասնության, որպես ազգի փրկության միակ հեռանկարի հստակ ըմբռնումը բնորոշ էր նաև Բաֆֆուց ու նրա համախոհներից աջ կանգնած մտածողների համար։ Այդ միասնության անհրաժեշտությունը նրանք ընդգծում էին թե՛ հատվածային (արևմտահայ, արևելահայ և այլն) և թե սոցիալ-դասակարգային բաժանումներն ու սահմանները հաղթահարելու համար։ Հենց այս տեսանկյունից էր խնդրին նայում ականավոր վիպասան ու հրապարակախոս Մերենցը (Հովսեփ Շիշմանյան), որն արդեն 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո իր համաձայնությունն էր հայտնում

---

[4] Ս. Ն. Մարինյան, Բաֆֆի։ Գաղափարների և կերպարների համակարգը, Երևան, 1985, էջ 298։

[5] Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. IV, Երևան, 1969, էջ 181—182։

հրեաների նման համազգային ուխտ ստեղծելու առաջարկին, «վասն զի միշտ օգտակար կրնա լինիլ ազգին և կեդրոն հայ ցրվածության»[6]։ Սակայն այդ «հայկական ուխտը» նա պատկերացնում էր ոչ թե որպես ազատագրական կազմակերպություն, այլ ազգի խաղաղ զարգացման հնարավորություններն ապահովող և ուժերը համախմբող մի հաստատություն։

Իր կյանքի մայրամուտին ազգային միասնության անհրաժեշտության հստակ ըմբռնմանն էր հասել նաև արևելահայ ազատամիտների առաջնորդ Գ. Արծրունին։ 1877—1878 թթ. պատերազմի շրջանում նա հայկական հարցի լուծման հեռանկարները կապում էր Ռուսաստանի միջամտության հետ։ 1880-ականների կեսերին Ռուսաստանի բացասական մոտեցումը պարզվելուց հետո Գ. Արծրունին չափավորեց «Մշակի» հոդվածների մարտական ոգին, սակայն չհուսահատվեց և սպասում էր այն օրվան, երբ Ռուսաստանում կհաստատվեն օահմանադրական կարգեր և ինքը տաք մուշտակ հագած կգնա հյուսիս, որպես հայ ժողովրդի ընտրած պատգամավոր[7]։

Որպես ազատամիտ մտածող ընդգծելով մարդու հիմնական ազատությունների համար պայքարի անհրաժեշտությունը, Գ. Արծրունին գիտակցում էր, որ հայ ժողովուրդը դրան կարող է հասնել միայն ազգային ազատագրության ճանապարհով։

Ժառանգելով նրա գաղափարները Հ. Հ. Դաշնակցության հիմնադիրների սերունդը Ս. Զավարյանի բերանով հայտարարում էր. «Սրբությամբ ընդունելով 19-րդ դարու Քո տարածած սկզբունքները անձի և խղճի ազատության վերաբերմամբ՝ մենք կը դիմադրենք այն բոլոր տարրերին, որոնք հակառակ են այդ գաղափարներին, և կ'աշխատենք կյանքի մեջ իրականացնել այդ գաղափարները»[8]։

Հ. Հ. Դաշնակցության կազմավորմանը նախորդած գաղափարական բուռն որոնումներում վճռական նշանակություն ունեցան ոչ թե հայ ազատամիտների, այլ ազգային նարոդնիկության մեջ տեղի ունեցող պրոցեսները, քանի որ դրանց հետևանքով ոչ միայն ձևավորվում էին հայ մարտական կազմակերպության գաղափարական սկզբունքները, այլև հասունանում էին այն գործիչները, որոնք 1890-ին հիմնեցին Հ. Դաշնակցությունը։

Անդրկովկասում գործող միասնական նարոդնիկական կազմակերպության քայքայումը և ազգային նարոդնիկական խմբակների ձևավորումը տեղի ունեցավ մի կողմից նարոդնիկության ներսում եղած խմորումների, մյուս կողմից՝ ազգային-ազատագրական շարժումների գաղափարական ազդեցության հետևանքով։ Նարոդնիկական պրոպագանդի անհաջողությունը շարժման առաջնորդներին ստիպում էր ժամանակավորապես հրաժարվել սոցիալիստական գաղափարների քարոզից և իրենց ուշադրությունն ուղղել ժողովրդի առջև կանգնած հրատապ խնդիրների վրա։ «Ժողովրդական իդեալին համակերպվելու անհրաժեշտությունը առաջին այն քայլն էր,—գրում է Աշ. Հովհաննիսյանը,—որը Ռուսաստանի որոշ ծայրամասերում զեմլևոլեցների ազգամիջյան շարժումը մղեց դեպի ինքնաբավ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունն ու կազմակերպչական ձևավորումը»[9]։ Այս պրոցեսն ավելի խորացավ 1881 թ. մարտի 1-ից հետո, երբ ուժեղացող ռեակցիան հայ նարոդնիկներին ստիպեց որոնել պայքարի նոր մեթոդներ և նարոդովոլցիների շարքերում գտնվող հայ գործիչները սկսեցին հետաքրքրվել սեփական ժողովրդի ցավերով։ Արդեն 1881 թ. Ագուլիսում ուսուցչությամբ զբաղվող Ք. Միքայելյանը կարճ ժամանակով վերադառնում է Թիֆլիս և իր նարոդովոլցի ընկերների առջև խնդիր է դնում «մի քիչ ավելի մոտենալ ծայրագավառների և առանձին ժողովուրդների կյանքի թանձրացյալ

---

6 Փորձ, 1879, № 7—8, էջ 210։

7 Գործ, Բաքու, 1917, № 3, էջ 98։

8 Նշխարներ Սիմոն Զավարյանի, Պեյրութ, 1968, էջ 25։

9 Բանբեր Հայաստանի արխիվների, 1968, № 2, էջ 127։

պայմաններին և այս պայմանների համապատասխան ստեղծել առանձին ազգային կազմակերպություններ, որոնք միայն ի վիճակի կը լինին թափանցելու հարազատ զանգվածների մեջ»[10]։ Նույն տեսակետն ինքնազարգացմամբ զբաղվող մի խմբակում կրքոտ պաշտպանում էր Գ. Տեր-Մրկտչյանը (Միաբան), որի կարծիքով «թեև սոցիալիզմի գաղափարը վեհ է, սակայն անհրաժեշտ է միջազգային խմբակները զբաղվեն նաև ազգային հրատապ խնդիրներով»[11]։ Հայացքների մեջ տեղի ունեցած տեղաշարժը շուտով գործի վերածվեց։ Թիֆլիսի միջազգային նարոդնիկական կազմակերպությունը պառակտվեց ազգային նարոդնիկական խմբակների։ Ակտիվ գործիչներից մեկի՝ Ս. Տեր-Գրիգորյանի կարծիքով պառակտման անմիջական շարժառիթը կենտրոնից եկած մի հրահանգիչի՝ Սեմյոնովի 1881 թ. ձմռանը Օրթաճալայում՝ Էլիզավետի այցում կարդացած զեկուցումն էր։ Սեմյոնովը զարգացնում էր այն միտքը «թե ռուս ազգի պատմական առաքելությունն է ի մի ձուլելու փոքր ազգերը»[12]։ Նրա գաղափարների դեմ ծառանում են հայ ու վրացի գործիչները և միասնական կազմակերպությունը պառակտվում է. «այնուհետև մտքերի մեջ տիրական է դառնում մի նոր նշանաբան—«հեղափոխություն հայկական հողի վրա»[13]։

Անկախ նրանից, թե որքանով է հավաստի Ս. Տեր-Գրիգորյանի այս վկայությունը, 1882 թ. միջազգային կազմակերպության պառակտումն արդեն կատարված փաստ էր։ Կազմակերպության ակտիվ գործիչներից մեկը՝ Ա. Դաստակյանը, այդ մասին հայտնում էր Ագուլիսում ուսուցչությամբ զբաղվող Ք. Միքայելյանին ու ավելացնում, որ ձևավորված հայկական խմբակն «ամբողջովին կը նվիրե իր գործունեությունը անբախտ հայ ժողովրդի անպաշտպան շահերին»[14]։ Սա հայ ազգային նարոդնիկության հավատամքի առաջին արտահայտություններից մեկն էր, պայքարի նոր նպատակների հստակ մատնանշումը։

Ձևավորված հայ ազգային նարոդնիկական կազմակերպություններն «ազգային կազմ ունեցող և հիմնականում ազգային-քաղաքական նպատակների հետամուտ»[15] նարոդնիկական խմբավորումներն էին, որոնք պահպանելով պայքարի հին մեթոդներից շատերը, ժամանակավորապես հրաժարվում էին իրենց առջև կանգնած սոցիալական խնդիրների մեծ մասից, հանուն ազգային նպատակի՝ արևմտահայերի ազատագրության։

1882 թ. գարնանը Մոսկվայում, ուսանողական մի փոքրիկ սենյակում, ձևավորվեց մեկ այլ ազգային նարոդնիկական կազմակերպություն՝ «Հայրենասերների միությունը», որի անդամները Ն. Աբելյանի և Դ. Ներսիսյանի միջոցով նույն թվականին կապվեցին Թիֆլիսի խմբակի հետ։ Վերջինս դարձավ «Հայրենասերների միության» մի ճյուղը։ Գ. Տեր-Մկրտչյանի, Ք. Միքայելյանի և Ս. Ջավարյանի ջանքերով Թիֆլիսում հրատարակվում էր «Դրոշակ» խմորատիպ օրգանը։ Հրատարակվեցին նաև «Հայրենասերի ձայն» ու «Մունետիկ» խմորատիպ թերթերը։

Ապագա գործունեության թատերաբեմն ուսումնասիրելու նպատակով «Հայրենասերների միության» Թիֆլիսի կենտրոնը գործիչներ էր ուղարկում Արևմտյան Հայաստան։ 1883 թ. նրանց միջոցներով և աջակցությամբ «երկիր» անցան Ա. Թոխմախյանը, Հ. Մելիք-Դադյանը, Տ. Փիրումյանը և Ալ. Պետրոսյանը (Սանդալ)։

---

10 Հայրենիք, Բոստոն, 1924, № 10, էջ 57։

11 Նույն տեղում, 1925, № 1, էջ 11։

12 Հայաստանի պատմության պետական թանգարան (այսուհետև՝ ՀՊՊԹ), Վավերագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, № 832, թ. 36։

13 Նույն տեղում, թ. 37։

14 Հայրենիք, Բոստոն, 1924, № 10, էջ 57։

15 Բանբեր Հայաստանի արխիվների, 1968, № 2, էջ 129։

1883 թ. աշնանը ղեկավար գործիչների մի խումբ (Թ. Ադամյան, Սրապիոն և Սիմոն Տեր-Գրիգորյաններ, Ա. Դաստակյան) մեկնեց Մոսկվա՝ ուսումը շարունակելու։ Դա ավելի ուժեղացրեց «Հայրենասերների միության» մոսկովյան կենտրոնը, որը հրատարակում էր «Ազատության ավետաբեր» թերթը։ Այս թերթի էջերում հայ ազգային նարոդնիկության գաղափարական սկզբունքները հետագա զարգացում ստացան։ Հեղափոխությունը հայ իրականության մեջ, հայկական հողի վրա իրականացնելու անհրաժեշտության հստակ գիտակցումը ավելի ևս ամրապնդվեց և սկսեց զուգորդվել այն համոզմունքի հետ, որ «մի ժողովրդի ազատության առաջին պայմանը նրա սեփական գործունեությունն է, իսկ ուրիշները օգնում են միայն աչքի առաջ ունենալով իրանց անձնական շահերը»[16]։

Հաշվի առնելով սեփական ուժերը և գիտակցելով, որ ժողովուրդը դեռևս անպատրաստ է ազատագրական պայքարին, իսկ բռնություններն ու հարբստահարությունները հասել են այն աստիճանին, որ բացառում են արևմտահայության խաղաղ տնտեսամշակութային զարգացման ամենափոքր հնարավորությունն անգամ, «Ազատության ավետաբերը» պատերազմ էր հայտարարում օսմանյան տերությանն ու անհրաժեշտ էր համարում հունական կլեֆտների և սլավոնական հայդուկների նման ստեղծել զինված խմբեր, որոնց «նպատակը պետք է լինի սարսափահար գործունեություն (տերրոր)՝ այսինքն Հայաստանը ավերողներին փչացնելը, կոտորելը»[17]։ Դրան զուգահեռ հարկավոր էր նաև «հեղափոխական գաղափարների ամենալայն քարոզությունը Հայաստանի ժողովրդի մեջ»[18]։ Այս ամենը նպատակ ուներ թմրությունից հանել ժողովրդին և նրա պայքարին հաղորդել զանգվածային բնույթ։

Հայդուկային շարժման գաղափարախոսությունը, որն արտացոլվել էր Բաֆֆու վեպերում, սկսում է զբաղեցնել նաև ազգային նարոդնիկական կազմակերպությունների ղեկավարներին։ Գնալով ավելի ու ավելի էր պարզվում նրանց անցումը դեպի ազգային դեմոկրատական գաղափարների հորձանուտը և այդ ֆոնի վրա գծագրվում էր «հայ հեղափոխության» մինչ այդ խիստ աղոտ գաղափարը։ Եվ Բ. Գրիգորյանի բանաձևած միտքը, որ «ռուսների գործն է ազատություն նվաճել իրենց երկրում, իսկ հայերն իրանց եռանդը պիտի սպառեն բացառապես Թուրքահայերի ազատագրության համար»[19], հետագայում բազմիցս կրկնում էին ազգային նարոդնիկական գաղափարներով տարված երիտասարդները։ 1887 թ. «երկրից» նոր վերադարձած Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանը Ներսիսյան դպրոցի աշակերտներին քարոզում էր այդ նույն գաղափարը. «ռուսական հեղափոխությունը պետք է թողնել իրենց՝ ռուսներին, մենք՝ հայերս, Տաճկաստանում շատ գործ ունենք անելու»[20]։

Ուսումնասիրողների մի մասը հայ ազգային նարոդնիկության՝ դեպի ռուսական հեղափոխական շարժումը որդեգրած նման դիրքորոշումը փորձում էր բացատրել նրանով, որ «հայ հեղափոխականները իրանց մեջ խիզախություն չէին գտնում ծառանալու ցարիզմի դեմ և ընթանում էին դիմադրության նվազագույն գծով, որ հեղափոխական գործի արծարծումն էր Թուրքիայում»[21]։ Սակայն այստեղ վճռական դեր էր խաղում ոչ թե խիզախության բացակայությունը, այլ ցարական կառավարության դեմ մարտնչելու քաղաքական աննպատակահարմարության գիտակցումը։ Ս. Տեր-Գրիգորյանի վկայությամբ, իրենք աշխատել են, որ «միշտ ռուս կառավարության

16 Ազատության ավետաբեր, 1884, № 4, էջ 3։

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում։

19 ՀՊՊԹ, Վավերագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, № 832, թ. 42։

20 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 4047, ց. 2, գ. 7, թ. 12։

21 ՀՊՊԹ, Վավերագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, № 832, թ. 43։

աչքը քաղցր չինի հայերիս վրա, և հավատացել են. որ միակ պետությունը հզոր Ռուսաստանն է, որի աջակցությամբ «Հայրենասերների միությունը», ժամանակը հասնելիս, կազատի իր եղբայրակիցներին կարմիր սուլթանի բռնակալական լծի տակից»[22]։

Ի տարբերություն «Հայրենասերների միության» չափավոր ուղեգծի, հայ իրականությանը մոտ կանգնած Թիֆլիսի գործիչները ընդգիմադիր դիրք գրավեցին ցարիզմի նկատմամբ։ Այն իր արտահայտությունը գտավ «Հայ եղբայրներ և հայ քույրեր» թռուցիկում, որի հեղինակներ Ք. Միքայելյանն ու Գ. Միրզոյանը գրում էին. «Այսուհետև մեր միակ հույսը թող մենք ինքներս լինենք. այսուհետև էլ ուրիշի մանավանդ ռուսաց կառավարության վերա վստահ չը լինենք և երբ իբրև ճշմարիտ հայ մեր սուրբ պարտքը կկատարենք, այն ժամանակ, հավատացեք հայեր, հաղթությունը արդարի կողմն է լինելու»[23]։ Սակայն ռուսականացման քաղաքականության դեմ ուղղված պասսիվ դիմադրությունը բավական չէր։ Ազգային նարոդնիկական խմբակների առաջավոր երիտասարդությունը որոնում էր նոր արժեքներ և պայքարի նոր մեթոդներ։ Դեպի ազգային սրբությունները տանող ճանապարհը նրանց մոտեցնում էր հայ դեմոկրատիայի խոշորագույն երգչին ու մտածողին՝ Րաֆֆուն, որը նույնպես ընդդիմադիր դիրք էր գրավել ցարիզմի քաղաքականության հանդեպ ու իր գլուխգործոց «Սամվել» վեպում հստակ արտահայտել էր այդ տրամադրությունները։

1880-ական թվականների կեսերին, երբ մի կողմից ուժեղացել էր թուրքական կառավարության հայահալած քաղաքականությունը, իսկ մյուս կողմից էլ ցարական կառավարությունը ձեռնարկել էր հայկական դպրոցների փակման գործը, երիտասարդների մի խումբ Ս. Զավարյանի գլխավորությամբ որոշեց գնալ Րաֆֆու մոտ և նրանից ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները։ Մթնաշաղին նրանք վախվխելով մտան Թիֆլիսի Լերմոնտովսկայա և Գուդովիչի փողոցների անկյունում գտնվող այն բակը, ուր բնակվում էր մեծ վիպասանը։ Րաֆֆին իր անողոք տրամաբանությամբ երիտասարդների առաջ պարզեց ստեղծված ծանր կացությունը, ցույց տվեց նոր սերնդի անելիքները։ «Նրա ասածները ամփոփվում էին այն բանի մեջ,— հիշում է Ս. Զավարյանը,— որ մենք ո՛չ դրսի, ո՛չ առաջնորդի և ոչ որևէ մեկ ուրիշի վրա հույս չդնենք, այլ ջանանք մեր սեփական ուժերով դարման գտնել մեր ներքին ցավին, ամաչեցնենք անտարբեր աշակերտներին, պարապենք ցանկացողների հետ հայերեն, խնդրենք ուսուցիչներից բարեխիղճ վերաբերմունք դեպի մայրենի լեզվի դասավանդությունը։

Ինքնազարգացման եվ ինքնօգնության գաղափարն էր, որ ներշնչում էր մեզ Րաֆֆին»[24]։

Պատահականություն չէր նաև Րաֆֆու մեծ ուշադրությունը և հայրական գուրգուրանքը Ք. Միքայելյանի նկատմամբ։ 1885 թ. դեկտեմբերի 25-ին գրած նամակով նա խնդրում էր Մ. Փանյանցին՝ մասնավոր դասեր ճարել ծնողազուրկ և ապրելու համար ամիսը ընդամենը 15 ռուբլի ունեցող Ք. Միքայելյանի համար, որն այդ ժամանակ փորձում էր Մոսկվայում ուսում ստանալ։ «Պ. Միքայելյանը լավ վարժապետ է, իսկ նրա բարոյականության մասին կարող ենք հավատացած լինել, որ ամենապատվական երիտասարդ է»[25],— գրում էր Րաֆֆին իր մոսկովյան բարեկամին։

Նարոդնիկական երիտասարդության վերադարձը դեպի ազգային արժեքները և մերձեցումը Րաֆֆու հետ, բնավ էլ չէր նշանակում, որ նրանք ամբողջովին հրաժարվում էին իրենց նախկին հայացքներից։ Մնալով սոցիալիստներ, հավատալով ողջ մարդկության վերջնական ազատագրմանը,

---

22 Հորիզոն, Թիֆլիս, 1912, № 76։

23 ՀԽՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ, ֆ. 114, ց. 2, գ. 53, թ 3։

24 Նշխարներ Սիմոն Զավարյանի, էջ 59—60։

25 Արարատ, Էջմիածին, 1913, № Զ-է, էջ 584։

պահպանելով նարոդնիկների հեղափոխական պայքարի մեթոդներից շատերը, նրանք այդ բոլորն ի սպաս էին դնում արևմտահայության ազատագրման գործին։ Հանուն ազգային շահերի, նրանք հետաձգում էին սոցիալական խնդիրների լուծումը և ձգտում էին հասնել ազգի բոլոր հատվածների միասնությանը՝ փրկելու համար բնաջնջման եզրին կանգնած արևմտահայությանը։

1880-ականների երկրորդ կեսին գաղափարական նույն գործընթացներն իրենց հորձանուտի մեջ էին առել նաև Մոսկվայում ու Պետերբուրգում սովորող հայ ուսանողությանը։ Այստեղ նույնպես որոնումների արդյունքը նույնն էր՝ վերադարձ դեպի ազգային արժեքները և ազգային միասնության անհրաժեշտության գիտակցումը։ Սակայն այդ պրոցեսն ընթանում էր երկու ճանապարհով։ Այստեղ նույնպես երիտասարդության մի մասը տարված էր նարոդնիկական գաղափարներով, սկսել էր ուսումնասիրել նաև մարքսիզմը։ Այս խմբի մեջ էին մտնում Հ. Հ. Դաշնակցության ապագա առաջնորդներից շատերը, այդ թվում Ս. Զավարյանը, Ռոստոմը (Ստեփան Զորյան) և ուրիշներ։ Նրանց կարծիքով զուտ հայկական հողի վրա ծավալվող գործունեությունը կորստաբեր կարող է լինել հայ ժողովրդի համար, քանի որ «անջատվել Ռուսաստանի հեղափոխական մեծ շարժումից, նշանակում է շեղվել հեղափոխական ճանապարհից և կորստյան մատնվել, ոչնչանալ»[26]։ Իրենց հակառակորդների կողմից «կոսմոպոլիտներ» կոչվող այս խմբավորմանը հակադրվում էին այսպես կոչված «շովինիստները», որոնք կանգնած էին միայն ազգային արժեքների պաշտպանության դիրքերում։ Այսպիսի մոտեցում ուներ, առաջին հերթին, Պետերբուրգի հայ ուսանողությունը, որի գաղափարական առաջնորդը Կ. Խատիսյանն էր։ «Կոսմոպոլիտներն» ու «շովինիստներն» այն երկու ծայրահեղություններն էին, որոնց գաղափարները ժամանակի ընթացքում աստիճանաբար համահարթվեցին։ 1889—1890 թթ. տեղի ունեցած իրադարձությունների ազդեցությամբ նրանք սկսեցին մոտենալ իրար, թեև վերջնական հաշտությունը չկայացվեց նույնիսկ Հ. Հ. Դաշնակցության հիմնադրումից հետո էլ։

1889 թ. Մոսկվայում տեղի ունեցած հայ ուսանողության համագումարում, որին մասնակցում էին ազգային-քաղաքական գործունեության կողմնակիցները, Պետերբուրգի ուսանողության ներկայացուցիչները հանդես եկան անմիջապես պայքար ծավալելու առաջարկով, իսկ Մոսկվայի այսպես կոչված «երկրականների» խումբը գտնում էր, որ նախ պետք է ուսումնասիրել ապագա գործունեության թատերաբեմը և հետո միայն գործի անցնել։

1889 թ. և 1890 թ. առաջին ամիսներին ուսանող երիտասարդության նշանակալից մասը վերադարձավ Թիֆլիս ու տեղական գործիչների հետ միասին մեծ դեր խաղաց «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությունը հիմնելու հարցում։ «Երիտասարդ Հայաստանի» ներսում շարունակվեցին սուր բանավեճերը զուտ ազգային-քաղաքական գործունեության կողմնակիցների («Սևերնիե նոմերայի» խումբը) և ազգային-ազատագրական պայքարը սոցիալական խնդիրների հետ զուգակցելու անհրաժեշտությունը պաշտպանողների միջև («Յուժնիե նոմերայի» խումբը)։ Պայքարը շարունակվեց նաև Հ. Հ. Դաշնակցության հիմնադիր ժողովներում՝ 1890 թ. հուլիս-օգոստոսին, երբ «Թուրքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատությունը»[27] դարձավ այն դրոշակը, այն սուրբ նպատակը, որի շուրջը համախմբվեցին տարբեր հայացքներ ունեցող գործիչները։ Դրանով իսկ ընդգծվեց ազգային նպատակի առաջնությունը սոցիալական խնդիրների նկատմամբ։ Հրաժարվելով սոցիալիզմի գաղափարից, որը պաշտպանում էր ղեկավար գործիչների մեծ մասը, ձևավորված Հ. Հ. Դաշնակցությունը, դառնում էր հաջ

---

26 Հայրենիք, Բոստոն, 1923, № 5, էջ 29։

27 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 2, թ. 1։

ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջնորդը, փորձելով այդ պայքարին հաղորդել համազգային բնույթ։

Այսպիսով, Հ. Հ. Դաշնակցությունը ծնունդ առավ հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության հենքի վրա քաղաքական տարբեր խմբավորումների ու հոսանքների միաձուլման և սինթեզի ճանապարհով։ Դառնալով ազգային-ազատագրական շարժումը ղեկավարող դեմոկրատական կազմակերպություն, Հ. Հ. Դաշնակցությունն ազգային շահերի տեսանկյունից էր գնահատում սոցիալ-դասակարգային խնդիրները՝ միշտ հանդիսանալով ազգային միասնության դրոշակակիրը։ Հ. Հ. Դաշնակցության գաղափարական զինանոցի միջուկը կազմեցին հայ ազատամիտների հավատամքը մարդու հիմնական ազատությունների համար պայքարի անհրաժեշտության մասին, «ազգ» և «հայրենիք» զույգ հավերժական սրբությունների բաֆֆիական ըմբռնումը, արևմտահայերի ազատագրության խնդիրը՝ հայոց հարցը լուծելու պատմական առաքելության իրականացման մեջ զինված պայքարի անհրաժեշտության դիտակցումը, մարդկային հասարակության զարգացման վերջնական նպատակը կազմող սոցիալիզմի գաղափարը, որը կարելի էր կյանքի կոչել ազգի ֆիզիկական գոյությունն ապահովելուց և նրա պատմական հայրենիքը ազատագրելուց հետո միայն։

ИДЕЙНЫЕ ИСТОКИ АРМЯНСКОЙ РЕВОЛЮЦИОННОЙ ПАРТИИ ДАШНАКЦУТЮН

Г. С. ХУДИНЯН

Резюме

Подъем армянского национально-освободительного движения во второй половине 1880-х годов способствовал сплочению и консолидации разнородных общественно-политических течений и группировок для решения проблемы освобождения западных армян. Идейной основой этой консолидации стало осознание приоритета национально-политических задач над социально-классовыми. По этой причине деятели либерального и демократического лагеря стали на путь сближения с идейными руководителями армянских национально-народнических организаций 1880-х годов, которые в свою очередь установили тесные контакты с крупнейшим идеологом армянского национально-освободительного движения писателем Раффи.

HIGH-PRINCIPLED SOURCES OF ARMENIAN REVOLUTIONARY PARTY DASHNAKTSUTJUN

G. S. KHUDINIAN

Summary

The ascent of Armenian national-liberation movement in the second half of the 1880-s promoted the unity and consolidation of heterogeneous social-political trend and groupings for solving the liberation problem of western Armenians. Admitting the ptiority of national-political problems over the social-classical became the ideological basis of this consolidation. By this reason public-figures of liberal and democratic camp stood on the way of rapprochment with the high-principled leaders of Armenian national-democratic organizations of 1880-s. who, in their turn, established tight contact with the prominent ideologist of Armenian national-liberation movement writer Raffi.